

Մ. ՓԻՐՈՒՄՅԱՆ

ՀԵՇԱԿԱՑՈՂԻ
ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԻՆՍԻՏՈՒՏԻ ՀՐԱՄԱԿԱՆԵՑՈՒՆ

Ց Ե Ր Ե Վ Ա Ն

1938

ՀԽՍՀ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԻՆՍԻՏՈՒՏ

374.4

Դ-66

Ա. ՓԻՐՈՒՄՅԱՆ

ԱՐԴՅՈՒՆ է 1961 թ.

ՀԵՌԱԿԱՑՈՂԻ
ԻՆՔՆՈՒԹՈՒՅՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ



A II
II 989

Խմբ. Մ. ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

Տեհ. Խմբ. Խ. ԽԱԶԱՏՐԵԱՆ

Օքազրիչ Կ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Դլամճկու կիազոր Տ.—9579 Պատվեր № 194, Տիրաժ 3500

Հանձնված և արտադրության 31 մայիսի 1938 թ.

Սահցողության և ապելու 8 հունիսի 1938 թ.

Ուսուցիչ, Պարտկայորման Խնսութառափառ ապարան, Ցերեան, Մարգարի փ. № 11

Կոմունիստական կուսակցությունն ու խորհրդային իշխառնությունը հսկայական ուշագրություն են դարձնում մեր յերկրի տնտեսության, կուլտուրայի և բոլոր այլ բնագավառներում կազմեր ստեղծելու, անհջնելու, և աշխատավորների կուլտուրական մակարդակը բարձրացնելու վրա: «Ժողովրդական ուսուցիչների ֆալանգը կազմում և մեր յերկրում սոցխալիզմի հիման վրա նոր կյանք կառուցող աշխատավորության մեջ բանակի ամենաանհրաժեշտ մասերից մեկը» (ՍՏԱԼԻՆ) և այդ ուսուցչությունը կոմունիստական հասարակակարգ կառուցելու ընդունակ սերունդ դաստիարակելու համար պետք է համապատասխանորեն զինվի այն ամենով, ինչ անհրաժեշտ է իր վրա զրված այդ մեծ ու պատվավոր պարտականությունը կատարելու համար: Այս իսկ նկատառումով Համկոմկուսաի կենտկոմը տարբական և միջնակարգ դպրոցի ուսումնական ծրագրերի և ուժիմի մասին 1932 թ. ոգոստոսի 25-ի իր վորոշմամբ «ապարատավորեցնում և դաշնակից հանրապետությունների լուսաժողումաններին, խորհրդային և կուսակցական որդաններին»՝ ամեն կերպ ապահովել սխառեմտափկ աշխատանքն ուսուցչի գաղափարական-քաղաքական մակարդակը, ընդհանուր կրթությունն ու մանկավարժական վարդետությունը բարձրացնելու գործը, վորի համար «միջոցներ ձեռք առնել ամենակարճ ժամանակամիջոցում պատշաճ ձևով կազմակերպելու ուսուցիչների մանկավարժական կրթության, հեռակա և կարևորագույն ուսուցման ամբողջ գործը»:

Ուսուցիչների տեսատացիայի և կոչման վերաբերյալ ՀԱՄԿ (թ)Կ կենտկոմի և ԽՍՀՄ մկն-ի 1936 թ. ապրիլի 10-ի վորոշումն եւ ավելի հրատապ և դարձնում ուսուցչության կրթական ցենտի և ուսուցչին մանկավարժական-ժամանակիսական գիտելիքներով ու վարպետությամբ զինելու գործը:

Մեր լայնածավալ հայրենիքի բազմահազար ուսուցիչները վերոհիշյալ վարոշութիւնների հիման վրա, տոգորված իրենց քաղաքական, ընդհանուր կրթական, մանկավարժական մեթոդական պատրաստության մակարդակը բարձրացնելու ցանկությամբ, այժմ լծված են մարզս-լենինյան ուսմունքով զինվելու, մանակիտական-մանկավարժական կրթություն ձեռք բերելու գործին:

Ինչպես հայտնի յէ, այդ կրթությունը ձեռք բերելու ուղիւներից մեկը հեռակա ուսուցութիւն է,

Այս նպատակն իրազործելու համար պահանջվում է եւս ուսկու ուսուցման գործի լավ դրվածք, սիստեմատիկ, համառ ու տոփուն աշխատանք հեռակա ուսուցման բոլոր ողակներում և իր իրեկ՝ հեռակայողի կողմից:

Այն զգալի թերությունները, մաղումները, վորոնք, գեռես կան հեռակա ուսուցման ցանցում և հեռակայողների մեջ և վորոնք կարող են վտանգ սպառնալ ուսուցչի կրթության մասին կուսակցության և կառավարության վորոշումները ժամանակին և լրիվ կատարելուն, վոչ միայն հեռակա ուսուցման ցանցի և նրա ապարատի թերի աշխատանքի արդյունք են, այլև զգալի որեն հեռակայողի ինքնուրույն աշխատանքի անկարգմակերպությամբ պետք է բացարձին:

Սույն գրքույցի նպատակն է ոգնել հեռակայողին իր ինքնուրույն աշխատանքները, ուսման գործը ավելի լավ կազմակերպելությամբ պետք է բացարձին:

I. ԱՆՀՐԱԺԵՇՏ Ե ՊԼԱՆԱՎՈՐԵԼ ԺԱՄԱՆԱԿՆ ՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԸ, ՍՏԵՂՇԵԼ ՈՐՎԱ ԿԱՅՈՒՆ ՌԵԺԻՄ

Բավական չե միայն սովորելու ցանկություն ունենալը, ամեն մի հեռակայող պետք է հաշվի առնի իր ուժերն ու հասրավորությունները և կազմակերպի ու պլանավորի իր աշխատանքներն ու ժամանակի ոգտագործումը:

Անշուշտ հեռակայողը, մանավանդ այն հեռակայողը, վորոն ապրում է ուսումնական կենտրոններից հեռու, չունի ուսման այն բոլոր համարակարություններն ինչ ունի ստացիոնար մանկավարժական կամ այլ ուսումնական հաստատության ուսանողը: Հեռակայողը նախ է առաջ ուսուցիչ և դպրոցում կամ այլ աշխատանք

և կափարում և իր աշխատանքային որվա դպալի մասը հատեկացնում և բուն ուսուցչական կամ այլ աշխատանքին,

Սակայն քանի վոր նա հանձն և առել հեռակա կարգով սովորել, հեռակա ուսումը նրա համար պիտի զառնա առաջնակարգ նշանակություն ունեցող խնդիր ու պարտականություն:

Հեռակայողը չունի ստացիոնար ուսումնական հաստատության ուսանողի մի շարք առավելությունները (ամբողջ ուսումնական տարվա ընթացքում պլանավորված և իրար հաջորդող դասախոսությունները լսելը, ամեն որ դասախոսի հետ շփվելն ու նրանից ոգնություն ստանալը, ուսումնական հաստատության հարուստ դրադարանից, լարորատորիաներից, կարինետներից ոգտվելը, անմիջականորեն սովորողների շրջապատում գտնվելն ու արդեն սովորություն դարձած ամենորյա ուսումը և, վոր գլւխավորն ե՝ ուսումը տվյալ ժամանակամիջոցում ուսանողի համար հիմնական, համարյա միակ պարտականություն լինելը). Հեռակայողը գտնվում և մի շարք յուրահատուկ պայմաններում, վորտեղ հաստատ կամք, կազմակերպվածություն, համբերատարություն, ինքնուրույնություն և նախաձեռնություն հայտնաբերելը վճռական գեր և խաղուել:

Հեռակայողը նախ և առաջ ինքը պետք ե պլանուվորի իր ժամանակն ու աշխատանքը: Ժամանակի պլանավորումը, որվա ոեթիմ ստեղծելն ու պահպանումը կատարելիս պետք և հաշվի առնել՝

ա) Իր դպրոցական պարագմունքների, դասերի կամ այլ աշխատանքի համար պահանջվող ժամանակիը:

բ) Հեռակա ուսման հետ կապված ուսումնական աշխատանքների համար պահանջվող ժամանակն ու եներգիան:

գ) Հասարակական աշխատանքները:

դ) Կուլտուրական պահանջների (թատրոն, կինո, թերթ և այլն) բավարարումը:

յե) Ինքնասպասարկման (սնունդ ու այն պատրաստելը, սենյակ հավաքելը, հագնդելը և այլն) աշխատանքները:

զ) Հանգստի և քննկության համար պետհանգող ժամանակը: Ժամանակը ժամանակի խոտացրած ոգտագործումը, ակարգություն ժամանց չունենալը, իր ժամանակի տեր լինելն ու պատահականություններից խուսա-

փելը վճռական նշան ակություն ունեն հեռակայացուզիք համար:

Դառնալով հեռակայող, ուսուցիչն արդին հանձն և առնում 3—5 տարի տեկողությամբ իր ժամանակի զգալի մասը հատկացնել ուսմանը: Յեթև պարբանական կերպով հեռակայողի աշխատանքային՝ որն ընդունենք 12 ժամ և հաշվի առնենք, վոր քննելուն պետք և հատկացնել 7—8 ժամ ու վերելում հիշատակված «Գ», «Դ», «Ց» կիտերի մասնակիրն՝ $4 - 4\frac{1}{2}$, ժամ, ապա պետք և լիովին բաշխված համարել որվա 24 ժամը: Աշխատանքային որվա 12 ժամից, նայած ուսուցչի դպրոցական ծանրաթևողվածության չափին, պետք և հեռակա ուսմանը հատկացնել խորեկան $3\frac{1}{2} - 4\frac{1}{2}$ ժամեր, հաշվելով, վոր մնացած $7\frac{1}{2} - 8\frac{1}{2}$ ժամերն անհրաժեշտ են դասերի ($4 - 5$ ժամ) և դասերի նախադասարարատման ու գպրոցական այլ աշխատանքների համար ($2\frac{1}{2}$ ժամ):

Ժամերի այս բաշխումը տրվում և վորպիս որվա սեժիմի որինակելի մի նմուշ, վորից թերումներ այս կամ այն կողմն անշուշտ կլինեն: Պարզ է, վոր փոքր յերեխա ունեցող հեռակայող ուսմանողունին ժայբական և ընտանեկան պարտականություններին ավելի ժամանակ և հատկացնում: Իր անմիջական պարտականությունների կտարարմանն ավելի ժամանակ և հատկացնում նաև այն հեռակայողը՝ որ վարչական աշխատանք և տանում և այլն:

Այս և անձնական բնույթ կրող այլ հանդամանքներն այսուածենայն իվ իրավունք չեն տալիս հեռակայողին պակասեցնել իր ուսմանը հատկաց վելիք որեկան $3\frac{1}{2} - 4\frac{1}{2}$ ժամերի չափը, վոր պիսին նվազագույնը պիտի համար է հատկացնում:

Որվա սեժիմը, աշխատանքների տարբեր տեսակների դասավորումը, հանգիստն ու քունը պետք և սեղամենտացիայի յենթարկվեն, նոխորոշված հաջորդականություն ու տեկողություն ունենան: Ինչպես մարդու կյանքում սովորություն և դառնում վորոշ ժամին արթնանալը կամ վորոշ ժամերին աշխատանքի վայրում գտնվելը, ինչպես զանգի հետ միասին ուսուցիչը դասարան և մտնում, այսպես ել հեռակայողը պետք և սովորություն դարձնի որվա վորոշ ժամերին անպայման զբաղվել իր ուսման աշխատանքներով, տմեն կերպ աշխատել չխախտելու այդ ժամերը:

Պահպահնելով այս կանոնը, հեռակայողն արդին ըստ սովորության ստեմանված ժամկին կակսի պարապմունքն ու ստեմանված ժամբն կվերջացնի այն: Հեռակայողի աշխատանքի այս կարգավորվածությունն իր հերթին ավելի կարգ կմացնի նրա այլ պարտա կանությունները կատարելու գործում: Անզուշա որվա ու եժինն ու ժամերի գասավորութն անխաթա որենք չեն և չնախատեսնված գեղքերի կապակցությամբ յերբեմն կարող են փոփվել: Սակայն նման խախտութերը վոչ մի դեպքում ճաճախակի չպիտի լինեն, և հեռակայողը պետք ե գաստիքարակի իր կոմքն ու բնավորությունն այնպես, վոր առանց ծայրահեղ անհրաժեշտության թույլ չտա խախտութերը: [Թույլ բնավորության տեր մարզը միշտ կարող ե «հարգելի պատճառներ» գտնել այդ խախտութերի համար և ինքն իրեն արդարացնել: Այդ գեպքում հեռակայողի ինքնուրույն աշխատանքի կազմակերպութն, ուրեմն հեռակա ուսումը վիճան կենթարկվի:

Սրանից բղխում ե այն, վոր հեռակայողն ինքն իր նկատմամբ խստապահանջ պիտի լինի ամենից առաջ ժամանակի խնայօղության և որվա ու եժիմի պահանձան դործում: Անհրաժեշտություն չե, վոր որվա ու եժիմը գրաֆիկայի, ժամացուցակի կամ այլ ձեռվ անպայման գրվի ու փակցվի պատին: Կարեռը որվա ու եժիմը գրավոր ունենալը չե, այլ ոյդ ու եժիմը պահպանելն ե, ուստան ժամերն այլ բռնի, ժամապահնդ ոնիմառու ժամեանցի չվերածելն ե:

Որվա ու եժիմը ե ուսումնական ժամերը կարգավորելու կապկցությամբ անհրաժեշտ ե ասեք վոր հեռակայողն անհեն անդամ պետք ե նոր աշխատանք պկաի նախորդ աշխատանքից հետո վորոշ ընդմիջում ե հանգիստ ունենալուց հետո: Որինակ՝ չի կարելի դպրոցում 4—6 ժամ պարագելուց ե առան գտլուց հետո անմիջապես հեռակա ուստան աշխատանքներին անցնել: Հոգնած ուղեղով ուսումնական լարված աշխատանք կատարելն արդյունավետ չի լինի:

Հեռակայողը պետք ե կարողանա կտղման կերպել իր հանգիստը: Իզուր չե առված՝ սով հանգստանալ չղիտե, նա չգիտե նաև աշխատելու: Հանգստի որը լրիվ հանգիստ պիտի լինի նաև հեռակայողի համար: Բացառություն կարող են կազմել միայն այն հանգստի որինը, յերբ ուրիշ ավելի հարմագ որ չըւնե-

նալով, կոնսուլտակայանում կոնսուլտացիա յեւ կազմակերպված։ Ըստիրական հանդիպումները, այցելությունները, հավաքույթները և այլն ցանկալի յեւ հանդստյան որը կատարել։ Հանդստի որը նման կերպ անցկացնելը հեռակայողին հնարավորություն կտա աշխատանքի որերին ճշտությամբ պահպանել իր որվա ռեժիմը։

Այս հարցին թե որվա վոր ժամերը նպատակահարմար են հատկացնել սեփական ուսումնական աշխատանքներին, պետք է վորոշի ինչ քը հեռակայողը։ Այս հարցի լուծումը կախված է առաջին հերթին հեռակայողի հիմնական՝ գպրոցական կամ այլ աշխատանքի ժամերից, բնակարանային և ընտանեկան պայմաններից և իր անձնական սովորություններից։ Յեթե սովորաբար ավելի արդյունավետ են առավոտյան ժամերը, ապա վոչ պակաս արդյունավետ կարող են լինել ցերեկվա կամ յերեկոյան աշխատանքը, ինարկե յիթե գրան նախորդել են հանգիստը, և կան աշխատանքի տեղի և այլ հարմարություններ, վորոնց մասին կիսուննք գըրքույկիս շըրդ գլխում։

Որվա ժամերի բաշխումը, որվա սեփիմնունը պահանջում է առաջնումը անհրաժեշտ են վոչ միայն ընդհանուր առաջեց, այլ նաև հեռակա ուսուցչաման ավագալումն առաջնական առաջնումն է առաջարկությունը։

Հեռակայողն ուսումնական տարվա սկզբին ստանում է արվական կուրսի ուսումնական պլանը, վորի մեջ նշված են առարկաները, նրանց լեկցիոն ժամերը, կոնսուլտացիայի և ուսանողի ինքնուրույն աշխատանքի ժամերը։

Անջուշտ այս ժամերն որյենտիր են մոտավոր հաշվով։ Այս նկատի առնելով հանգերձ, հեռակայողը պետք է տարեսկզբին թեկուղ սուտավոր ճշտությամբ վորոշի, թե վոր առարկային տարեկան վորքան ժամ պիտի հատկացնել։

Ենթալով ուսումնական պլաններում նշած ինքնուրույն աշխատանքի ժամերի քանակից և նկատի ունենալով, վոր հեռակայողը մեջին հաշվով հեռակա ուսուցման գծով պետք է աշխատի որական շուրջ 4 ժամ, հեռակայողին տարեկան պետք են

շուրջ 160-ից (3-րդ կուրս) մինչև 220 որ (1-ին կուրս) չհաշված ամառվա սեսիոն պարապունքներին հատկացվող որերը:

Այս քանակի աշխատանքային որ հեռակայողը պետք է ունենա և ըստ այնմ պլանավորի իր տարեկան աշխատանքը:

Բացի ուսումնական պլանից հեռակայողն ստանում է առարկաների ծրագրերը, գրականության ցուցակը և առաջադրություններ ու ցուցմունքներ տվյալ առարկան մշակելու համար: Հեռակայողն ուշիւուղի պետք է ծանոթանա այս փաստաթղթերի հետ և ճշգրիտ պատկերացում ունենա վողջ ուսումնական տարվա աշխատանքների, տարբեր առարկաների գծով տարրող աշխատանքների, գրականության ու նրա ծավալի, կոնտրոլ աշխատանքների բնույթի և հարսկից խնդիրների մասին: Այս անհրաժեշտ և նրա համար, վոր հեռակայողը կարողանա կազմել տարեկան աշխատանքների պլանը, վորի մեջ նշվի, թե առարկաներն ինչ հաջորդականությամբ կամ զուգահեռականությամբ և վոր ամիսների ընթացքում պետք է մշակվեն ու ավարտվեն: Դժբախտաբար մինչև այժմ չի հաջողվել ուսումնական տարեսկզբին բոլոր անհրաժեշտ նյութերն ու ցուցմունքներն ուղարկել հեռակայողին:

Նյութերի մի մասը հեռակայողը կստանա ուսումնական տարվա առաջին կիսամյակի վերջին կամ նույն իսկ յերկրորդ կիսամյակում: Սակայն սա իրավունք չի տալիս հեռակայողին ձեռները ծալել և սպասել մինչև բոլոր նյութերն ստացվեն, վոր ինքը կարողանա ամբողջական պլանավորում մացնել իր տարեկան աշխատանքներում: Զերքի տակ ունենալով ուսումնական պլանը, նա պետք է անմիջապես ձեռնարկի արդեն ստացվաց ծրագրերով ու ուսումնական ազբյուրներով մի քանի առարկաների մշակումը: Տարեկան աշխատանքների ամբողջական պլանը, վորի մեջ իրենց արտահայտությունը կզտնեն բոլոր առարկաները, կարելի յե կազմել և հետո, իսկ քանի այդ դեռևս կազմված չե, ապա հեռակայողը պետք է 1—2—3 առարկաների գծով ավելի ինտենսիվ աշխատանք կատարի և ավելի շուտ վերջացնի նրանց մշակումը:

Ցերեք չի կարելի հանձնարարել հեռակայողին ուսումնական պլանում նշված բոլոր առարկաների մշակումը միաժամանակ սկսել և զուգահեռ առաջ տաները նման մշակում հնարավոր

չե, իսկ այդ յեղանակի գործադրման դեպքում դրական արդյունք չի ստացվի:

Հեռակայողը յելնելով՝ ա) իր աշխատելու յուրահատկությունից և կարողությունից, բ) հարակից առարկաների մշակումն ու յուրացումը մեկը մյուսից կախում ունենալու հանգամանքից, գ) գրականության առկայությունից և դ) կոնարու աշխատանքների ժամկետներից, պետք ե անձամբ վորոշի մեկը, յերկու թե յերեք առարկա միևնույն ժամանակամիջոցում մշակելու խնդիրը։ Համենայն գեղարդը յերբեք ցանկալի չի, վոր հեռակայողը միաժամանակ մշակի յերեք առարկայից ազելին։ Հակառակ գեղագում հեռակայողի ուշադրությունը չափազանց կցըրկի (նա առանց այն ել բացի հեռակա ուսուցումից ուրիշ աշխատանքներ ել ե կատարում) և պարապմունքներն անհրաժեշտ արդյունք չեն տա:

Անհրաժեշտ ե ուշադրության վազջ ուժերի կենարունացում կտարել և, ինչպես ասում են, ուսումնական առարկան «գրավել»։ Սա նշանակում ե, վոր ուսանողը պետք ե պարզ պատկերացնի տվյալ առարկայի մասներն ու նրանց կապակցությունները, դըժվարություններն ու նրանց հաղթահարելու յեղանակները և, յեթե վոչ լիովին ճշգրիտ, առա համենայն գեղարդը ամենածուավոր կերպով նշի տվյալ առարկայի աշխատանքների կատարման ժամկետները։

Տարեկան պլանը կազմելիս, աշխատանքների սկիզբն ու մանավանդ ավարտումը հնարավոր և նշել մոտավոր ճշտությամբ։ Հեռակայողը կարող է 15 որ շուտ կամ ուշ վերջացնել աշխատանքի հատվածներից մեկն ու մեկը։ Սրա կապակցությամբ հաջորդ աշխատանքի սկիզբն ու ավարտումը, վորոնց ժամկետները նախապես նշված ենին պլանում, կարող են փոխվել։ Անշուշտը հեռակայողը նման գեղագրերում չպիտի հուսահատվի, այլ ընդհակառակը՝ պետք ե հնարավոր միջոցներ վորոնի, —ուժերի լարման ու ժամանակի տնտեսման միջոցով, —վորպեսզի անկախ աշխատանքի հատվածների կատարման ժամկետների մասնակի խախտումից, առնվազն կիսամյա և գլխավորապես առարկան պլանը ժամանակին կատարը և հաջորդ կուրս փոխադրվելու ժամանակ «պարտք» չունենա:

Այս տեսակետից կարեոր նշանակություն ունի աշխատանա-

քի կատարման, պլանի իրացման հաշվառումը։ Հեռակայողը պետք է ամիսը 1—3 անդամ ստուգի իր աշխատանքների պլանի կատարումը։ Ի գեղ, այս պլանը նու կարող է կազմել գրաֆիկայի, սյունակների կամ սովորական կարգով գրելու ձեռվով։ Սա հական նշանակություն չունի։ Կարևորն այն է, վոր պլանը և հաշվառումը միևնույն թերթի վրա լինեն, սահագըծվածն ու կատարման հաշվառումը կողք-կողքի լինեն, վորպեսզի հեշտ լինի ստուգումը։

Պլանի կատարումն ստուգելու հիմնական նպատակը ժամանակի ոգտագործման և աշխատանքի յեղանակների ծառումներ կատարելն ու ուղղումներ մտցնելն է, վորը միաժամանակ խթան և հանդիսանալու հետակայողի համար՝ իր ուժերն ու ժամանակը ճիշտ բաշխելու ու ոգտագործելու։ Յեթե անհրաժեշտ չի որպատ ժամերի ոգտագործման հաշվառումը կատարել 10—15 րոպեների ծառությունը, ապա անհրաժեշտ և այնպիս կազմակերպել աշխատանքը, վոր այսորվա գործը վաղվան չմնա։ Որ որի գործը հետաձգելով ժամանակի ոգտագործման «բալանս» չի կազմվի, պարտքի և աշխատանքի կուտակումն առաջ կդա, վորը վերջին հաշվով կարող և առաջ ընթել ինքնուրույն աշխատանքի անկազմակերպություն ու քայլայում։

Գիտական աշխատազների, լավագույն սովորողների փորձը ցույց է տալիս, վոր նրանց հաջողությունների աղբյուրն աշխատանքի առանձնահատուկ պայմանները չեն, նրանց ինչ վոր «բացառիկ» անձնական ոժավածությունը չեն, այլ ամենորյա աշխատանքի սիստեմատիկ ուսցիունավիզացիան է, աշխատանքն ավելի ճիշտ պլանավորելը, կազմակերպելը և աշխատանքի ավելի բեղմափոր մեթոդներ գտնելն ու դորձապեկելն է։

II. ՊԵՏՔ Ե ՍՏԵՂԾԵԼ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՀԱՐՄԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒ ԿԱՀԱՎՈՐԱՆՔ

Կոմունիստական կոսակցության և խորհրդային իշխանության կողմից գեղի ուսուցիչը հոգատար վերաբերմունք ունենալու հետևանքով տարեցարի ավելի ու ավելի յեն բարելավվում նրա տնտեսական, սյութական և կուլտուրակենցաղային պայմանները, վորպիսի հանգամանքն իրավունք և տալիս հեռա-

կայող ուսուցչին առաջազրելու մի շաբթ պահանջներ՝ նրա ինք-նուրույն ուսումնական աշխատանքի հարմարանքների և կահա-վորանքի վերաբերյալ:

Սշխատանքի լավագույն հարմարանքները ունե-նալը, հեռակայողի ուսումնական աշխատանքի արդյունավետության յիշը աշխատանքի արդյունավետության յիշը ի գները են:

Յեթե ամեն մի աշխատանք իր առանձնահատկություններն ունի և կարող է նորմալ ընթանալ բարձրարար արտաքին պայման-ներ լինելու գեղքում, ևս առավել դա վերաբերում է մտավոր աշխատանքին:

Վորոնք են այդ հարմարանքները, վորոնք ստեղծելու, իսկ յեթե արդեն կան, բարելավելու վրա պետք է իր ուշադրու-թյունը դարձնի հեռակայող ուսանողը:

Աշխատանքի սենյակ

Մտավոր պարապմունքն ուշադրության ակտիվ լարումն և պահանջումն Ուստի, այնտեղ, վորտեղ պարապում և հեռակայողը, պետք է լուսություն ու անդորր ու-թյուն լինի: Մշակվող նյութերի վրա կենտրոնանալու համար պետք է կողմնակի առարկաները չգրավեն պարապողի ուշադրու-թյունը, իսկ ամեն մանրունք, ամեն ձայն, վորը կա, լավում և հեռակայողի պարապած սենյակում, կարող է պարապողի ուշա-դրությունը գրավել: Յեթե հեռակայողը հնարավորություն ու-նի առանձին սենյակ ունենալու, ապա ուշադրությունը գրավող այդ բացասական յերեսութների զգալի մասն ինքնըստինքյան չի լինի: Սակայն յեթե հեռակայողը պարապում և ընդհանուր սենյակում, վորտեղ ուրիշ ժարդիկ, ընտանիքի այլ անդամներ, կան, ապա պետք է աշխատել պարապմունքի ժամերի ընթաց-քում այդ պարապմունքները չխանդարելու միջոցառումների մաքսիմումը գործադրել:

Ուշադրությունն ամբողջապես տվյալ պարապմունքի վրա կենտրոնացնելու և նյութը խոր մշակելու ու յուրացնելու տեսա-կետից առաջնակարգ նշանակություն ունի առանձին սենյակ ունենալը: Յեթե այդ հնարավոր չե, ապա առնվազն պետք է ընդհանուր սենյակում պարապմունքները չխանդարելու միջոցառումների մաքսիմումը գործադրել:

մաքսիմում նպաստավոր պայմաններ լինեն: Կողմանակի, խանգարիչ մոմենտները նվազագույնի հասցվին:

Մի մարդու պարապելու տեղի համար բավական և շուրջ 12—15 քառ. մետր տարածությամբ սենյակ: Անհամաժշտ ե, վոր սենյակի ողը միշտ մաքուր լինի և մանավանդ, յեթե հեռակայողը ծխող ե, հաճախակի ողափոխվի: Ծանր խեղդիչ ողում աշխատանքն արդյունավետ լինել չի կարող: Սենյակի ողը պետք է վորոշ խոնավություն ունենաւ, այլապես ողի չորությունը կղժվարացնի կանոնավոր շնչառությունը և մարդ անդուրեկան չօրություն կզգա բերանում ու շնչափողում:

Աշխատանքի սենյակը բացի մաքուր ողից ունենալու յերավարար աստիճանի ջերմություն: Սենյակի նպատական արձար ջերմաստիճան 15—20 աստիճանն ե (8 և սիուսով): Անշուշտ այստեղ նշանակություն ունի առանձին անհատների սովորությունը,—մեկն ավելի տաք ե սիրում, մյուսը պակաս: Համեմայն զեպս սենյակի ջերմաստիճանն այնպիսին պիտի լինի, վոր պարապողը ցուրտ կամ շոգ չզգա, ինչպես նաև մի փորեւ կողմից ողի ցուրտ կամ առաջ հոսանք անմիջապես չհասնի պարապողին (վառարանից պատուհանից և այլն):

Մտավոր պարապմունքի համար շատ կարեոր նշանակություն ունի լուսավորությունը: Դպրոցական հաստատությունների համար ընդունված ե սենյակի լուսամուտների և հատակի 1:5 հարաբերությունը, այսինքն լուսամուտների ընդհանուր մակարդակը տվյալ սենյակի հատակից պիտի փոքր լինի վոչ ավել քան 5 անգամ:

Հայտնի յե, վոր լույսը պետք ե ընկնի պարապողի և նրա սեղանի վրա ծախ կողմից: Զդիտք ե պարապել այնտեղ, վորտեղ արեգակի հառագայթներն անմիջապես ընկնում են գրքի, տետրակի կամ գծապրության վրա: Արհեստական լույս սով պարապեկիս (նավթի լամպ, ելեկտրականություն) լավ ե, յերբ պարապողի աչքերն ստվերումն են գտնվում: Շատ հանձնարարեկի յե կաթնագույն ելեկտրական լամպ կամ լուսամփոփ ունենալը: Լույսն այնպիսի հեռավորության վրա պիտի գտնվի, վոր գրքի կամ տետրի թուղթը չփայլի, և նրանց լույսի արտացոլումը չընկնի պարապողի աչքերի մեջ: Սեղանի ելեկտրական

լամպ (լրւսամփոփով) ունենալու առավելություններից մեկն ել այն ե, զոր դա լրւսավորելով սկզբանը, համեմատաբար խավար և ստեղծում սենյակի մյուս մասերում և նպաստում ե ուշադրության կենտրոնացմանը:

Գրասեղանը, աբովը յեվ աշխատանքի այլ կահավորանք

Պետք ե ունենալ աշխատանքի վորոշակի տեղ և սովորություն դարձնել միշտ այնտեղ պարապել:

Սրանից յենելով, պետք ե առաջարկել հատուկ գրասեղան ունենալ, վորոշակակի իր անհրաժեշտ նյութերը: Նայած մարդու հասակին, գրասեղանն ել ավելի կամ պակաս բարձրություն պիտի ունենա: Շատ ցածր սեղանն ստիպում է կռանաք վորոշ սեղմակում և կրծքավանդակը, և արյունը ուժեղ հոսում և զեպի գլուխը: Բարձր սեղանը ձեռների համար անհարմար ուռություն է ստեղծում և զիրքն ու տետրը, չափից աշխիլ մոտեցնելով տչքերին առաջ և բերում վերջիններիս հոգնածություն: Գրասեղանի բարձրությունը 70—75 ստումեր մետր պետք ե լինի, աթոռն ելնը առանձ համեմատ:

Գրասեղանի վրա զանազան ավելուր գարգարան պիտի լինեն: Գրենական պիտույքները՝ թանաքամանը, գրիչը, մատիտները, սետին, քանոն, պրիսպապիե, թուղթ, գծագրական իրերը և մոխրամանը, բառարանները, գըր քերն ու աետրակներն այնպիս պիտի զասավորվեն, վոր չխանգարեն, յերբ պետք չեն, «ձեռքի տակ» լինեն հարկավոր ժամանակը, և պարապողն ստիպված չլինի ավելորդ շարժութեր կատարեր: Լավ ե՝ զբարեն ու տետրակներն իրենց տեղն ու վորոշակի դառնվորութեան ունենան:

Անհրաժեշտ ե նաև գրասեղանի մոտ գրքակալ ունենալ, վորոշեղ դրվեն պարապմունքի համար անհրաժեշտ գրքերը, տեղեկատունները և այլն: Ընդհանրապես հանձնարարելի յե պարապմունքն ոկսելուց առաջ 1—2 րոպե հատկացնել գրենական պիտույքների, գրքերի և տվյալ պարապմունքի համար անհրաժեշտ այլ նյութերի դասավորմանը, վորակեսդի պարապմունքի ընթացքում առվելորդ ընդհատութեր ու վորոնութենք չլինեն: Յերբ պարապու

զը յերկար նստելուց ու աշխատանքից հողնում ե, լավ ե մի քանի
բուքե շրջադաշել սենյակում կամ նստած մնալով՝ հենվել բագկա-
թուի հենակներին ու հանգստանա:

Վերոհիշյալ հարմարանքներն ու կահավորանքը այս կամ
այն չափով չունենալը սակայն յերբեք չի նշանակում սովորելու
հնարավորություններից գուրկ լինելԿարելի յե պարապել ու սո-
վորել և ափելի սուղ պայմաններում ու լինել վոչ պակաս առա-
ջազբ ուսանող: Սակայն ամեն մի հեռակայող պետք ե աստի-
ճանաբար ստեղծի այս նվազագույն հարմարանքները՝ աշխատան-
քըն ափելի հեշտացնելու ու բեղմնավոր դարձնելու համար:

III. ԼՐԻՎ ՈԳՏԱԳՈՐԾԵԼ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԳՐՔՈՎ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՈԱՑԻՈՆԱԼ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ

Ինչպես ասել ենք, հեռակայողն ուսումնական տարվա սկզբին
ստանալու յե ուսումնական պլանը, ծրագրերն ու ուսումնական
առարկաների գրականության ցուցակը: Հեռակայողն իր առաջին
գործը պիտի համարի ծրագրերում նշված գրականությունը
ձեռք բերել էակ կլինի տվյալ առարկայի կամ մի խումբ ա-
ռարկաների համար (որ պատմություն, գիտլելտիկական մատե-
րիալիզմ, մանկավարժություն կամ գրականության տեսություն,
հիմնական դասագիրք կամ հիմնական աղբյուր հանդիսացող գըր-
քերը հեռակայողը զնի և անձամբ ունենա (Մարքսի, ենգելսի,
Լենինի, Ստալինի յերկերը, մասնագիտական հիմնական գրքերը
և այլն): Այս կարգի գրքերը պետք ե վոր լինեն հեռակայողի
անձնական գրադարանում, դրանք անհրաժեշտ են և ուսումնա-
կարուելուց հետո: Յեթե հնարավոր չե անհրաժեշտ դրականու-
թյուն անձամբ ունենալ (մանավանդ տվյալ ժամանակամիջոցում),
ապա հեռակայողը պետք ե դպրոցում, իր բնակավայրի գրադա-
րանում, շրջանային կուսկաբինետում, ուսումնական այլ հոս-
տատություններում, աշխատակից ուսուցիչների և այլ մասնա-
գետների ու ընկերների մոտ գտնի և վերցնի ծրագրերում նշված
գրականությունը թեկուզ ժամանակավոր ոգտագործման համար:
Դրականություն հայթայթելու գործում շատ բանով կարող ե
ոգնության գալ Ուսուցիչների վորակավորման ինստիտուտը
Հեռակայողն իր ուսումնական աշխատանքներում պետք ե

առարկայի ծրագիրը, ծրագրի թեմաներն ու կետերը յելակետ համարի և ծրագրերը լրի վաշակելու տեսանկյունով մոտենա դասագրքերի և այլ նյութերի մշակման ու ամփոփմանը:

Ուսանողը պարապելիս պետք է հիշի, վոր ծրագրի ամեն մի կետը միաժամանակ ինքնուտուգման հարց ե, և իր ինքնուրույն աշխատանքի առաջին նպատակն այդ կետերի լուսաբանումն է, ըմբռնումը, խոր յուրացումն ու բանավոր կամ գրավոր լավ արտահայտել կարողանալը:

Հետաքայլ աշխատանքը գրքի հետո:

Գրքի բովանդակությունը հասկանալու և այդ բովանդակությունն իր սեփականությունը դարձնելու վճռական նախապայմանն այն ե, վորպեսզի ամեն մարդ, ներկա դեպքում հեռակայող ուսանողը, — բացի ժամանակից, ժամանակի պլանավորումից, կահավորանքից, գրքերից և այլն, — ունենա մտավոր աշխատանք կատարելու, գրքով աշխատելու ունակություններ ու հմտություն

«Փորձը ցույց ե տալիս, — ասում է Ռեփալլը, (ԱՄՆ-ի Միչեգանի համալսարանի պրոֆեսոր), — վոր սովորողները նույնիսկ այն ժամանակ յերբ դասերը պատրաստելու շատ ժամանակ չունեն՝ ձգձգում են աշխատանքը սկիզբը»:

Իրենք իրենց «թափ տալու», աշխատանքն սկսելու համար նրանցից շատերը վատնում են ավելի քան 10—15 րոպե: Այս բանը վերացնելու համար պետք է առաջնորդ վիճակ 2 աշխատքաստանու նշանաբանությունը և աշխատանքն սկսել անհապաղ:

Սկսված աշխատանքի վրա պետք է կենտրոն ացնել վողջ ուշադրությունը, անհրաժեշտ և հետաքրքրություն ստեղծել և վոգենորմել աշխատանքով: Այն, ինչ արվում է դժկան մությամբ՝ դժվարությամբ և յուրացվում:

Նախ քան նոր աշխատանք սկսելը պետք է նայել ու հիշել թե ինչ և որ ված նախորդ անդամ: Սա անհրաժեշտ ե, վորովհետեւ կը կնելով հինգ մենք ստեղծում ենք մի շարք կապակցութեր (ասոցիացիա) նորի և հնի միշտել, վորոնք հիմնական պայման են ամեն մի ուսուցման և ուսումնական իրության հաջողության համար:

Տվյալ որվա ինքնուրույն աշխատանքի ժամերը լրանաւու, հոգնածության կամ ուրիշ տռարկա մշակելու անհրաժեշտու-

թյան և այլ դեպքերում, — յեթե ընդհատվում է աշխատանքը, մանավանդ ինքնուրույն շաբադրություն գրելը — կոնտրոլ աշխատանք կատարելը, ապա ուսանողը պետք է նշի, թե ինչ պիտի անի հաջորդ անգամ, յեթե է վերսկսելու նույնույն աշխատանքը կամ նոր աշխատանքությունը կտղմող մի այլ աշխատանքը: Աշխատանքն ընդհատեն մի ուսանողը պետք է պարզ պատկերացնի աշխատանքի հետապա ընթացքը, հեռանկարը, Անհրաժեշտ և աշխատանքն ընդհատելուց անմիջապես հետո նշել «աշխատանքը վերսկսել այսինչ բանից», «Ն գրքից կարդալ... եջերը», «զարդացնել շաբադրության մեջ այսինչ միտքը, հետո այսինչը» և այլն:

Ցիթե աշխատանքի սկիզբը, ընդհատումն ու վերսկսումը խոչընը նշանակություն ունեն, ապա ավելի մեծ նշանակություն ունի բուն աշխատանքը, վորի վրա պետք է կենորունացնել վողջուժից:

Նախ և առաջ պետք է վորոշել տվյալ որվա ու ժամերի աշխատանքի բովանդակությունն ու ընթացքը, Ուսանողը պետք է նախատեսի նյութի ծավալը և նյութերի մշակման հաջորդական կարգը: Անհրաժեշտ է, վոր ուսանողը վորոշակի պատկերացնի, թե ինչ և մշակելու և այդ նյութը տըսվյալ առարկայի հաջորդական փոքր ողակն է կազմում, ինչ տեղ է դրավում առարկայի մեջ և, յեթե հնարավոր է, ապա ինչ տեսակար կշիռ ունի նա առարկայի նախառական մշակած նյութերի համեմատաթյամբ: Մտավոր աշխատանքը ինտենսիվություն և պահանջում է: Միենանույն ժամանակ, ուժերից վեր և անսովոր մեծ տեխնոլոգիայուն ունեցող մտավոր աշխատանքը կարող է ներփակյանության վերածվել: Նյարդային համակարգության ավելորդ լարումը կարող է զերոյի հավասարեցնել վողջ աշխատանքը, այս իսկ պատճառով չափեց ավելի աշխատանք, դերհանածություն չպիտք է թույլ արվի: Իհարկե, սրա համար մի ընդհանուր նորմա չկա, — մեկը կարող և ավելի աշխատել մյուսը նրանից պակաս: Ամեն մի հեռակայող ինքը պիտի կարողանալ վարուշել իր հոգնածության սահմանագիծը, վարեց այն կողմ չպիտք է անցնի:

Պատահում են դեպքեր, յերբ գիւղն ընթերցվում է մեքենայուրեն, իսկ ընթերցողի միտքը զբաղված է բոլորովին կռագա-

նակի ինդրով, և վերջում պարզվում ե, վոր նա ընթերցածից փոշինչ չի հիշում կամ չի հսկացել: Պետք ե պարապել հիշելու և յուրացնելու կայուն ժամկը ությամբ: Յերբ կա այդ ժամկը ությունը, և մարդ պարապում ե կենտրոնացած ուշադրությամբ, յուրացումն ապահովված ե:

Ինչ խոսք, վոր բոլոր առարկաները հավասարապես հետաքրքրեիր չեն, մանավանդ այդ առարկաների գծով աշխատանք տանելու սկզբում: Սակայն այդ անհետաքրքիր համարվող առարկաների ուսումնասիրությունն անհրաժեշտ է, դրանք կան ուսումնական պլանում, և հեռակայողը պետք ե նրանցից քննություն տա տարեկերջին: Յերբ ուսանողը կարողանում է ինքն իրեն հարկադրել պարապել այդ առարկայով, տեսնում ե, վոր առանց հետաքրքրության սկսած աշխատանքը վերջում դառնում է հետաքրքիր և նույնիսկ գըրավեց:

Սակայն պարապելիս չպետք ե միշտ նկատի ունենալ ավագալ առարկայից քննությունն տալու հանգամանքը: Այդ քննությունն տալն սպառնալիք չպետք ե դառնալ և ուսանողը ձեռք բերվող գիտելիքների վրա պետք ե նայի նախ և առաջ վորպես կյանքում ու իր հետազա աշխատանքներում անհրաժեշտ գիտելիքների վրա:

Անշուշտ քննությունն ուսանողի գիտելիքների ծավալն ու խորությունն ե հայանաբերում և քննությանը բարձր գնահատական ստանալը կարեւոր նշանակություն ունի, բայց և այնպես «պարապել միայն քննությունն տալու համար» սխալ սկզբը բունք ե:

Անհրաժեշտ ե ավելի ժամանակ հատկացնել և ավելի ուշադրություն դարձնել գիտելիքների և ունակությունների, բացիքի, թերությունների, թույլ կողմերի վրա: Այս կանոնը, չնայած իր հստակության և միաժամանակ տարրական լինելուն, պատկանում ե նըրանց թվին, վորոնք ավելի հաճախ են խախտվում: Շատ մարդկիկ սովորաբար նախընտրություն են տալիս հեշտ աշխատանքին և իրենք իրենց համար յեվս աննկատելիորեն հաճախ խուսափում են դժվար աշխատանքից: Այդ դժվար աշխատանքներից մեկը նախորդ շրջանի ուսման թերությունները վերացնելն ե: Հե-

ուակայող ուսանողը պետք ե լրացնի իր գիտելիքների և հմտությունների նախորդ շրջանի (միջնակարգ դպրոցի) պակասը՝ թըստավական, հանրահաշվային, քերականական-շաբահյուսական և այլն գիտելիքների ու հմտությունների թերի կողմերը։ Ուսանողական շրջանում ել պատահում ե, յերբ հերթական ուսումնական աշխատանքից հեղտն արվում ե, իսկ զժվաը հետաձգվելով անկատար մնում։ Վերջին հանգամանքը միշտ կարող ե կասեցումներ ստեղծել հետագա աշխատանքի այս կամ այն ընագաղաքում։ Յես գիտեմ ուսանող Գոհին, վորն ուղղագրություն լավ չիմանալով, հաճախ խուսափում ե զրել նույնիսկ սուրբ պահանաջի գեղքում։ Պարզ ե, վոր Գոհ այս «տակտիկայից» վոչ մի լավբան չի ստացվի։

Կան ուսանողներ,—այդպիսիների թիվը պակաս չե լինի մանավանդ հեռակայողների մեջ,—վորոնք աշխատանքը (ինքը լուծում, գրքի տեկստի լավ մշակում և ըմբռնում, ուռւսերեն աղյուրի ոգտագործում և այլն և այլն) անկատար են թողնում, յերբ հանդիպում են գժվարությունների։ Մակայն սա գրությունից դուրս գալու միջոց չե։ Դժվարությունների հանդիպելը պետք ե կրկնապատճի մարզու ուժերն այդ գժվարությունները հաղթահարելու համար։ Դժվարությունների գեղքում,—ասենք խնդիրը լուծելիս,—չպետք ե աշխատանքը մի կողմ դնել յեթել ասածին անգամ նա անհաջող ե լինում։ Փորձը պետք ե կրկնեալ, Յարդի անգամ։

Նման գեղքերում հեռակայողը իր հույսը նախ և առաջ եր վրա պիտի դնի և ուրիշի ողնությանը զիմի միայն այն գեղքում, յերբ համոզված ե, վոր անձամբ չի կարող հանդիպած գժվարությունը հաղթահարել։ Միայն այս ձևով հնարավոր ե առաջ գնալ և դարգացնել ինքնուրույն աշխատանքի հմտություն ու կարողություն։

Այն, ինչ ամենակարևորն ե յերկար ժամանակված համար պիտանի, պետք ե ուսումնական դասը վի կենացը նացած ուշադրությամբ և մանրադնին կերպով Պետք ե ամեն որ կատարել առաջիկա աշխատանքի գնահատականն այն տեսակատից թե նյութի վճռ մասի վրա պետք ե առավել ուշադրություն դարձնել և թե ինչ պիտք ե անել այդ մասն ավելի լավ յուրացնելու համար։

Պետք ե ամեն որ կատարել առաջիկա աշխատանքի գնահատականն այն տեսակատից թե նյութի վճռ մասի վրա պետք ե առավել ուշադրություն դարձնել և թե ինչ պիտք ե անել այդ մասն ավելի լավ յուրացնելու համար։

Մի անգամ ձեռք բերածը, յուրացրածը, վորը թեկուզ և մոմենտին մոռացված լինի, յերեք չի կարող անոգուտ համար-վել: Մեր սովորածից շատ բան նշանակություն ունի վորպես հետագա նյութերը յուրացնելու սկզբնական նախապատրաստուաթյուն: Մի անգամ յուրացված, սակայն հետո մոռացված գիտեալիքները մենք կարող ենք շատ ավելի քիչ ժամանակ և ուժ ծախսելով դարձյալ վերականգնել ու վերհիշել Բոլորովին նոր ձեռք բերվող գիտելիքների համար ավելի շատ ժամանակ և ուժ և հարկավոր ծախսել:

Սրա հետ կապված ե այն կանոնը, ըստ վորի ուսանողը չպետք ե միայն յեղակացությունները յուրացնի, այլ պետք ե առաջին հերթին վորքան կարելի յեշ շատ կոնկրետ փաստեր իմանաւ ու հիշելու նաև առաջին կապված իմանալը հեշտացնում ե ընդհանուր որենք գտնելու, լայն ընդհանրացումներ անելու գործը:

Շատ փաստեր իմանալը, նախապես յուրացրած գիտելիքների վրա հիմնվելը մեղ հնարավորություն ե տալիս վոչ միայն ճիշտ ընդհանրացումներ անել այլ և սովորեցնում ե կարեորն ու յերկրորդականը, դպրավոր մաքերն ու նրանց բացարությունները իրարից զանազանել և աշխատանքի ընթացքում ավելի ուշադրություն դարձնել ամենակարեօր մոմենտների վրա: Եերկրորդականին, վորն անհրաժեշտ է տվյալ մոմենտի համար միայն, այնքան ժամանակ պետք է հատկացնել, վորքան դա անհրաժեշտ է տյդ յերկրորդականն այդքան ժամանակամիջոցում հիշելու համար:

Աշխատանք գրեալ

Ուսանողի ուսման հիմնական ակունքներից մեկը, իսկ հեռակայող ուսմանողի հիմնական ակունքը, գիրքն եւ նախ և առաջ այդ գիրքը պետք ե ճանաչել: Դրանով աշխատանք կատարելու առաջին փուլը դա գիրքը թեթևակի թերթելն ե, բովանդակության հետ, գրքի պլանի, հեղինակի մտքերի շաբազրման յեղանակների հետ ծանոթանալն ե: Կան գրքեր, մանագանդ դասագրեք, վորոնց մեջ նյութերը դասավորված են պարագրաֆներով (չենք խոսում արգեն գրքի հատվածների և գլուխ ների մասին, վորոնք բոլոր ուսումնական ու գիտական գրքերի

մեջ կան): Գրքի ամեն մի պարագրաֆի մեջ ընդհանրապես մեկ կամ մի քանի հիմնական մտքեր են արված լինում, իսկ վերջումն ել նյութի ռեզյումեն և արվում: Այս դեպքում հեշտ և կատարվում նյութի մշակումն ու յուրացումը: Սակայն կան հեղինակներ, վորոնց գլխավոր հարցադրումներն ու մտքերը ցըլված են տասնյակ եջերի վրա և արտաքույտ (տեկստի շարվածքով) վաշնչով աչքի չեն զարնվում: Ուսանողը պիտի կարողանա հասկանալ հեղինակի մտքերի շարքը և արտաքույտ (տեկստի շարվածքով) վաշնչով աչքի չեն զարնվում: Ուսանողը պիտի կարողանա հասկանալ հեղինակի մտքերի շարքը և արտահանույթած կատարի մշակումը: Պետք ե ուշադիր կարդալ և կարողանալ գտնել պարբերության, պարագրաֆի, յենթագլւխի կամ գլխի ու հատվածի գլխավոր միտքը, Ամեն մի պարագրաֆի հիմնական միտքը, վորոն արտահանույթած և լինում 1—2 նախադասությամբ, պիտի «ըսնել», համոզվել նրա յուրացման մեջ և նոր միայն առաջ անցնել:

Ավելորդ չեմ համարում այստեղ բերել Լյադովի խմբագրությամբ լույս տեսած «Ինչպես պիտք և աշխատել գրքով» աշխատության մեջ հանձնարարած կանոններից մի քանիսը, վորոնք վերաբերում են ուշադիր ընթերցանությանը (քաղվաճքը բերում և Մ. Սանթրույանի «Դրքով աշխատանքը միջնակարգ գպրցում» գրքից եջ՝ 21—22, Յերևան, Պետհրատ 1935 թ.).

3. Կարդալիս կարողացիր ջոկել հիմնականը յերկրորդականից, յեղբակացություններն ապացույցներից ու պարզաբանող որինակներից: 4. Ընթերցանության ժամանակ հանդիպած բոլոր անհասկանալի բառերն ու արտահայտությունները գրիր ու հետո դիմիր բառարանին կամ ուրիշի ոգնության: 5. Շատ յերկար կանգ մի առնի անհասկանալի տեղի վրա, վորովհետև հաճախ շարունակության մեջ լուսաբանվում և անհասկանալի տեղը: 6. Ընթերցանության ժամանակ գրիր ընթերցանության կապակցությամբ ծագած բոլոր հարցերը: 7. Կարգա մատնանշված եջերը, կարդացածի բովանդակությունից բղիող հարցեր տուր ինք քեզ և դրանց պատասխանիր: Ավելի լավ է փարզ օգտիք լուսաբանությամբ պատմել նույն հարցը՝ ուսումնական պատմությունը առ պարզեցնի: 8. Շատ գրելով մի աւարգիր, զուսպելով սրայի գրքի հիմնական դրույթները, կարեոր կամ յուրացման համար ամենադժվար տեղերը: 9. Ցեթեւ ուսումնասիրվող հարցի համար մի քանի գիրք և մատնանշված, ուշադիր կերպով մշակեր միայն

դլամավոր ձեռնարկը, իսկ մյուսներից վերցրու միայն լրացուցիչ փաստեր և աեղեկություններ:

Վորպեզի գրքի մեջ բերած այս կամ այն որենքը, կանոնը, ընդհանրացումը ճիշտ և լրիվ հասկացվի, համոզվելու համար, վորիսկապես այդ որենքը կամ կանոնը լավ և յուրացվել, պետք և սեփական որին ակներ բերել Այսպես որինակը լեզվի, մասնավանդ ոռւսաց և ոտար լիզունների քերեկանական այս կամ այն կանոնը լավ կարող և հասկացված համարվել միայն ժամանակ, յերբ սովորողը կարողանում է սեփական որինակներ բերնը Նույնը գիտեկտիկական մատերիալիզմի, մանկավարժության (հատկապես դիդակտիկայի) և այլ ուսումնական առարկաների լավ յուրացման գործում: Այս կամ այն կտնոնը, ընդհանուր դրույթն իրեն անձամբ ծանոթ յերեւվույթների վրա ստուգելը գիտական յուրացման լավագույն ձեհերից մեկն եւ: Տեսականը գործնականի կապակցությամբ և պրակտիկայում ստուգելուց հետո արդեն սեփական և կայուն գիտելիք և դառնում:

Ամեն մի զասատու, ինքնուրույն մտավոր աշխատանքի փորձ ունեցող ամեն մի մարդ գիտե, թե ինչ նշանակություն ունի կրկնողությունը: Նախապես մշակած նյութը կրկնելով, մասնավանդ քննությունները տալու շրջանում, մենք հիշում ենք այն ամենն ինչ արդին թուլացել չքացել եր մեր հիշողության միջից: Յեթե վարժություններն ամրապնդում են հմտությունները և այդ հմտությունները վլուց չափով դարձնում են ավտոմատիկ (գրելը, ոտար լիզվով տեկտ կարդալը, հաշիվը և այլն), ապա կրկնողությամբ մենք և՛ հիշում ենք մշակած նյութերը և՛ վերանայում նրանց փոխարձ կապակցումները: Այս ձեռվ կատարվող կըրկնողությունն ըստ եյության մի նոր ուսումնասիրություն ե, սակայն անհամեմատ հեշտացած՝ նախապես կատարած աշխատանքի շնորհիվ: Կրկնողությունը մեծ նշանակություն ունի մասնավանդայն առարկաների յուրացման համար, վորոնք մեծ ու ծավալուն բովանդակություն ունեն, թվեր ու փաստեր շատ են պարունակում (որինակ՝ պատմությունը): Անշուշտ կրկնողության ժամանակ առավել ուշադրություն պիտք և զարձնել այն նյութերի վրա, վորոնք առաջին կամ յերկրորդ մշակման ընթացքում հստակ ու խոր չեն յուրացվել: Եերկու և ավելի անդամ և մասնավանդ

վոչ իրար յետկից այլ վորոշ ժամանակ անցնելուց հետո կըրկ-
նը ված նյութը (նաև ուրիշին պատմելու ձևով) կայուն է յուրաց-
վում: Յերբ ուսանողը տվյալ առարկան մշակում է միայն ան-
միջապես քննություն տալուն նախորդող որմբում, առանց ու-
սումնական տարվա մեջ այդ առարկայից աշխատանք կատարե-
լու, կամ ուսումնական տարվա ընթացքում սովորածը չի կրկնում
հետազայում, ապա նա դժվարությամբ քննություն կտա և ա-
ռավել դժվարությամբ կկարողանա հետազայում հիշել իր ան-
ցածը, վորովհետև կարճ ժամանակի ընթացքում իրար հաջորդող
կրկնողությունը շատ ավելի պակաս արդյունք է տալիս, քան
ավելի յերկար ժամանակի ընթացքում, վորոշ ժամանակումիջո-
ցեց հետո իրար հաջորդող կրկնողությունները:

Բացի կրկնողությունից, մանավանդ իդուներն ու այսպես
կոչված ճշգրիտ գիտությունները յուրացնելու մեջ խոշոր նշա-
նակություն ունի ֆորմուլաներ, սահմանումներ, տարեթվեր, կա-
նոններ և բառեր ու տերմիններ անգիր անհելը:

Անշուշտ անգիր անելուն պիտի նախորդի նյու-
թի գիտակցական ըմբռնումը

Անգիր անելը, մեխանիկական հիշողության ոգտագործումը,
ուսումնական նյութը լավ հիշելու լավագույն միջոցներից մեկն
եւ Քիմիական ֆորմուլաները, յերկրաշափական կամ այլ կանոն-
ները, վորոնք բազմաթիվ են, չի կարելի հիշել առանց անգիր
անելուն դիմելու: Նույնը բանաստեղծություններ սովորելու գոր-
ծում: Անգիր անելու կանոններից մեկը նյութն ամբողջտու-
թուած ընդգրկելուն եւ (յեթե իհարկե նա շատ մեծ չե): Այս ձևով ան-
գիր անելու առավելությունները հետեւաներն են. ա) նյութի
առանձին մասերի կապակցումները չեն թուլանում. ը) յերբ նյու-
թըն ամբողջությամբ է կարգացվում, ապա նա ըմբռնվում է և
հիշվում բովանդակության (դեպքերի) զարգացման տրամադրա-
նական կապակցություններով, հիշողության միասնությամբ և
հետեւաբար գ) ավելի հաստատուն պատկերներ են ստեղծվում
մեր ուղեղում:

Շատ անդամ գրքի, գասագրքի նյութերի այս կամ այն
մասը չի հասկացվում կամ թերի յի հասկացվում բազմաթիվ հա-
տուկ տերմինների կամ անծանոթ ու անհասկանալի բառեր հան-
դիպելու պատճառով: Ամեն մի մասնագիր տական առար-

կա իրեն հատուկ տերմիններն ունի, իսկ հաճախ
մի ենույն բառը, աերմինը տարբերառութով և զոր-
ծածվում տարբեր զիտությունների մեջ (որին ակա-
ասցիացիա բառը մի գեղքում, ամենք պատմության մեջ, գոր-
ծածվում և ընկերություն իմաստով իսկ մի ուրիշ գեղքում՝ հո-
գերանության և մանկավարժության մեջ տպավորությունների,
ըմբռնությունի համակցության իմաստով և այլն): Ամեն մի սովո-
րող պիտք և անձանոթ բառերը հասկանա, ինչպես նաև կարո-
ղանա դործածել այդ բառերը: Պետք ե, վոր ուսանողն իր ձեռքի
տակ բառարաններ ունենա և զրանք ոգտագործի: Յեթե ընթեր-
ցանության ընթացքում հանդիպած նոր բառը կամ բառերը չեն
խանգարում տեկստի իմաստն ըմբռնելուն, ապա անհրաժեշտ չեն
ընդհատել ընթերցումը և բառարանը նայել, որտ համար բա-
գական և համապատասխան տողի դիմոց մի նշում կատարել կամ
ձեռքի տակ ունեցած թերթի վրա գրել բառը, հետագայում մի
անդամից մի քանի բառ բառարանում նայելու համար: Սակայն
յեթե ավյալ բառը, տերմինը հաճախ և կրիսվում և առանց նրա
իմաստն իմանալու տեկստը հասկանալի չի, ապա անողայման
պիտք և կարև ժամանակով ընդհատել ընթերցանությունը և բա-
ռարանի ոգնությունը այդ բառի իմաստը հասկանալ ինչ խոսք,
վոր ուսանողը տառերի տյըռուբենական կարգը (հայերե-
նի, ոտարենի, ոտար լեզվի) պետք և լավ իմանա, բառարա-
նում ցանկացած բառը արագ գտնելու համար:

Ինքնուրույն աշխատանքի, գրքով աշխատելու վերսիցաւ
կտնոնները վերաբերքում են, յեթե կարելի յե այսպես ասել, «բա-
նագոր» աշխատանքին: Սակայն ամեն մի սովորող բացի նման
աշխատանքից, պետք և կատարի նաև գրավոր աշխատանք, ա-
վելի ճշգրիտ ասած՝ յուրացրած նյութը գրանցի կը կնո-
ղության և նյութն առավել լրիվ տիրապետելու
համար:

Հաճախ, յերբ կարգում ենք վոչ այնքան բարդ գիրք կամ
լսում գասաթոսին, մեղ թվում ե, թե կարգացածը կամ լսածն
այնքան պարզ և ու հասկանալի և միաժամանակ լրիվ ըմբռնված,
վոր ավելորդ և մի վորեն գրանցում կատարել: Սակայն յերբ
վորոշ ժամանակ անցնելուց հետո անհրաժեշտ և լինում, վերհե-
շել առավել ևս պատմելայդ կարգացած գրքի կամ լսած դասա-

իսոսության բովանդակությունը, և ամողվում ենք, վոր այդ «ոլարդ» ու հասկանալի», «լիովին յուրացրած» նյութը չի մնացել մեր հիշաղության մեջ։ Սա գտվիս եւ ասելու, վոր ուսանողը ինչպիսի լավ հիշողություն ել ունենա, պետք է սովոր ած ուսումնական նյութութն այս կամ այն կամ այն կերպ գրադապիսի նոր տպավորությունների, տվյալ նյութի հետ կապ չունեցող նոր պատկերների ու ըմբռնումների աղղուցություն տակ նսեմանում և և համարում հիշողության միջից դուրս գալու, անհետանալու աստիճանին։ Գրանցումն անհրաժեշտ է վոչ միայն անցածը հետագայում վերհիշելու համար, այլ հենց գրանցման միջոցով ուսումնական նյութն ավելի հիմնովին յուրացնելու, տպավորելու համար։

Մենք այսաեղ կանդ չենք առնի զբանցումներ, քաղվածքներ անելու, կոնսպիկտ կազմելու բաղմաղիսի ձևերի ու յեպանակների վրա։ Կառաջարկենք միայն այն, ինչ հեռակայողի պայշմաններում ամենանպատկահարմարն ենք համարում ժամանակի ու ուժերի խնայողության և առավել բարձր արդյունք ստանալու տեսակիտից։

Գրանցումների ամենատարբական ձեր դաս սեփական գըրք եւ վրա դանաղան պայմանութեան կան նշումներ կատարելն եւ Յերբ տվյալ առարկայի համար առաջարկված և կամ բավական և ոգտագործել 1—2 դասագիրք, վորոնք կան հեռակայողի մոտ և նրա սեփականությունն են կազմում, առա բավական եւ, վոր հեռակայողը այդ գրքի լրւանցքներում և տեկստի մեջ զանազան պայմանական նշումներ անի*)։ Այդ պայմանական նիշերը պետք է վորոշակի իմաստ ունենան, վորպիսզի կըրկնողության ժամանակ հեռակայողն իմանա, թե վոր ընդդումն ինչ նշանակություն ունի։ Որինակ հեռակայողը կարող է սահմանումներն ալիքածել ընդգծել տեկստի մեջ յեղած կարևոր ֆորումուլաների, տարեթվերի գիմաց՝ լրւանցքում շեշտ (') դնել, այն ժամը, վոր զեռևս լրացուցիչ մեկնաբանության կարիք ունի, նշել հարցականով (՞, ?) և այն և այն։ Այս դեպքում հատուկ տեսքը մեջ գրքից քաղվածքներ անելու և առանձին կոնսպիկտ գրելու անհրաժեշտություն չի զգացվի։ Հեռակայողի նշումներն

*) Գրքի վրա նշումները պետք է կատարել հասարակ մատիտով և վոչ մը դեպքում թափաքով։

ունեցող գասագիրքը և՝ առարկայի ընդարձակ շարադրանք ե,
և՝ քաղվածքների տեսքը և կոնսպիկտ: Հետագայում ոգտագործեալու համար նշումներ անելու անհրաժեշտությունը հեռակայութիւն
կամ թե ակամա ստիլում ե գիրքն ուշադիր կարգալ ու մշակել ձշգրիտ նշումներն անչափ հեշտացնում են կրկնողության
դրսն ինչպես ուսումնական տարվա ընթացքում, նույնպիս և քննությունների նախորյակին: Ինքնըստինքյան հասկանալի յե, վոր նման ձևով, այսինքն զբքի վրա նշումներ անելու ձևով «գըրավոր» աշխատանք կատարելու համար հեռակայուղը վորքան կարելի յե շատ սեփական գրքեր պետք ե ունենալ:

Յեթե հեռակայողը զբքի վրա նշումներ անելու դեպքումն ել անպայման ցանկանում ե և ժամանակ ու հնարավորություն ունի, ապա կարող ե բացի այդ նշումներից հատուկ կոնսպիկտ ել կազմել ոգտվելով ստորև բերված ցուցմունքներից:

Ընդգրածակ և բարդ նյութ յուրացնելու համար, մանաւագնդ յերբ հեռակայողն ոգտվում ե բազմաթիվ ու բազմապիսի ալբյուրներից (գասագիրք, ոժանդակ զբքեր, տեղեկատու, հանրագիտարաններ, վորոշումներ և այլն), լավ ե և կարեոր կարգացածի համառոտ կոնսպիկտ կազմել: Գրքից ոգտվելու խորհուրդներից մեկն ասում ե՝ «գիրքը կարդա ուշադրությամբ, կազմիր կարդացածի կոնսպիկտ և անդիք արա այն»: Յեթե կոնսպիկտն անդիք անելու անհրաժեշտություն չկա, մանաւագնդ յերբ մեծ և այդ կոնսպիկտը, պետք ե այնուամենայնիվ լավ յուրացնել այն: Լավ յուրացը ած և հիշողության մեջ ամրապնդված կոնսպիկտ կազմել կու շատ հեշտացնում ե դաշտագրքի, գրքի վողջ նյութերի յուրացումը և վերհիշումը: Հաճախ պատհում ե, վոր քննություն տարեւ ժամանակ ուսանողը խնդրում ե քննողին «թույլ տալ կոնսպիկտին նայել»: Քննողը ձիշտ ե վարվում, վոր արդելում ե այդ: Ուսանողի նման խնդիրը, յեթե ուսանողն այս կամ այն պատճառով արտակարգ շիռթված չի, հիմք չունի, և գալիս ե ասելու, վոր ուսանողը կամ նյութը կայուն ու լիվ չի յուրացըել կամ չի սուվորել մտած և առանց կողմնակի ոժանդակության և տրամաբանական հաջորդականությամբ բանավոր շարադրել այս կամ

այն նյութը՝ Նման «կոնսպեկտային» ուսանողը լավ ուսանող համարվել չի կարող:

Մենք արդեն ասել ենք, վոր հեռակայողն իր վողջ ուսումնական աշխատանքը պետք է բղխեցնի առարկայի ծրագրից և այդ ծրագիրը նկատի ունենա վորպիս յերակետ իր ինքնուրույն պարագմունքների համար: Յենիւրով այս դրույթից, պետք ե ասել վոր կոնսպեկտներն եւ—ինչ առարկայից ել լինեն զրանք,—պետք ե կազմվեն հատվածների, բաժինների, թեմաների և պարագրաֆների այն հաջորդականությամբ, ինչպիսի հաջորդականություն գոյուն ունի ծրագրում:

Ինարկի շատ ավելի հեշտ է կոնսպեկտ կազմել մշակվող գրքի նյութերի հաջորդականությամբ և տալ այս կամ այն գրքի բովանդակության սեղմ շարադրանքը, քան վերոհիշյալ ձեւվով, այսինքն ավլյալ առարկայի ծրագրի հետևողականությամբ կոնսպեկտ կազմելը Սակայն սկզբնական այս գժվարության հաղթահարումը անհամեմատ կհեշտացնի առարկայի յուրացումը ուսումնական ծրագրերի պահանջների համեմատ, վորպիսի յուրացում և պետք ե ուսանողն ունենա քննություն տալու համար:

Վորպիս որինակ բերենք մանկավարժությունը: Ուսանողն ստացել է առարկայի ծրագիրն ու դրականության ցուցակը: Վերջինս կազմված է ըստ ծրագրի հատվածների: Ուսանողը տեսնում է, վոր մի քանի հատվածների համար միաժամանակ, վորպիս աղբյուր մատնանշած է, որինակ ընկ. Լենինի ձառը կոմյերիտմիության Յըրդ համագումարում: Ուսանողն առաջին անգամ կարդալով այդ ձառը և նյութն իր ամբողջությամբ ըմբռնելուց հետո, պետք է այդ ձառի հիմնական գրույթներն ու մաքերը կոնսպեկտավորի ըստ ծրագրի հատվածների (կոմունիստական դաստիարակության եյությունը՝ առաջին հատված, զիսցիպինան՝ 4-ըրդ հատված «Գ» յենթաթեմա, հին դպրոցի մասին՝ Յըրդ հատված «Ա» յենթաթեմա և այլն): Նույնը՝ դպրոցի վերաբերյալ Համկոմկուսի Կենտկոմի և ԽՍՀՄ-ի ժողկոմխորհի վարոշության մասին: Զպետք է վախենալ, թե ըստ ծրագրի հատվածների կոնսպեկտ կազմելով կարող ե այս կամ այն վորոշումը մասնատվել և ուսանողի հիշողության մեջ ամբողջականություն

Հկաղմելու Ռւսանողը տվյալ վորոշումը կամ մի այլ նյութ առաջին անգամ մշակում ե իր ամբողջությամբ և սիստեմատիկ կարգով՝ սկզբեց մինչև վերը մշակումից հետո պետք ե սիստեմավորել ձեռք բերած գիտելիքները առարկայի ծրագրին, այսինքն առարկայի սիստեմին, ապա պետք ե կոնսուլեկտ կազմել ըստ ծրագրի հատվածների, ամեն անգամ, մանավանդ քաղվածքներ բերելիս, հիշատակելով գրքի անունը կամ վորոշման տարեթիվը ու ամիս ամսաթիվը (որ, 25/8—32 թ.): Ծրագրի տվյալ հատվածում նշած առաջին գիրքն այս կերպ մշակելուց ու կոնսուլեկտավորելուց հետո, հեռակայողը պետք ե անցնի 2-րդ, 3-րդ և հաջորդ գրքի կամ այլ աղբյուրների նույն ձևով մշակելուն, մինչև վոր սպառի ծրագրում նշած բոլոր գրքերի (կամ ծայրանել գեղագրում միայն ձեռք բերած գրքերի) մշակումը:

Եթե հեռակայող ուսանողը կոնսուլեկտ կազմում է գրքի նյութերի կամ վորոշման կետերի հաջորդական կարգով, վորն ի հարկե ավելի հեշտ ե, ապա նա պետք է կոնսուլեկտի լուսանցքում նշի առարկայի ծրագրի համապատասխան հատվածն ու թեման, վորպիսզի կրկնողության և քննություն տալու վերջին աշխատանքների ժամանակ իր գիտելիքները դասավորի այն ծրագրի համեմատ, վորով քննող դասախոսն առաջնորդվում է քննություն անցկացնելիս:

Այն հարցը, թե արդյոք պետք ե կոնսուլեկտի մեջ մեջբերումներ անել, մեջբերումը լրիվ տալ թե կը ճատ, կամ քաղվածքների հատուկ տեսքը ունենալ թե վոչ, պետք ե ամեն մի ուսանող ինքն անձամբ լուծի: Եթեր ուսանողը տեսնում է, զոր տը վյալ գրքից կամ այլ նյութից շատ բաներ պետք կդան անկախ առարկայի քննությունը տալուց, ապա լավ է հատուկ և միաշափ թեր թիկների վրա կամ մի տետրում գրի տռնել գրքի այդ մաքերը, արտահայտությունները, վորոշման կարեռը կետը, կազմել քաղվածքների տետր այս կամ այն նյութի վերաբերյալ Սսացյալ գեղագրում կոնսուլեկտի մեջ պետք ե գրքի խոսքերով բեր ամենակընատ, սակայն խտացած բովանդակությամբ նախադաս առաջնորդվում պարագաները առաջնորդվում են առաջնորդվում պարագաները:

բերությունը։ Յեթե սա շարադրական և այլ գժվարությունների հետ ե կապված, ապա կարելի յե սեփական խոսքերով, սակայն ըստ հնարին բնագրին մոտ և ամենասեղմ ձևակերպութափ տալ բնագրի բովանդակությունը։

Կոնսպեկտը քաղվածքներով չծանրաբեռնելու համար կարելի յե քաղվածքների փոխարեն, յերբ խոսվում է տվյալ տեկստի կապակցությամբ, կոնսպեկտում նշել գիրքն ու եջը (որինակ՝ տես՝ Լենին—Ընտ. յերկ. հ. 5-րդ եջ՝ 491—93, տես՝ Համեր) կ ծրագիր, պար. 12, կետ 1—3):

Կոնսպեկտը,—մինի գա կարդացած գրքի թի լամ դասախոսառության կոնսպեկտ, նյութը լիակատար կերպով ընդունված կերպով, պետք ե միաժամանակ սեղմ լինի ու կարճ։ Մի շարք ուսանողներ, սովորություն ունեն բառ առ բառ գրի առնել դասախոսի խոսքերը։ Սակայն վորովհետեւ նրանք սղագրողներ չեն, և բանավոր խոսքն ընդհանրապես շատ ավելի արագ ե քան գրավորը, ապա նրանք իրենց նպատակին չեն կարողանում հասնել։ Դասախոսությունը բառ առ բառ գրելու հետևանքն այն մեծ չարիքն ե, զոր ունկնդիրը լսած դասախոսությունը չի ըմբռը ունում դասախոսության ընթացքում։ Նա զբա փորձն ել չի անում և ամբողջապես տարված դասախոսի խոսքը մեխանիկորեն գրի առնելու ցինկությամբ, իր հույսը գնում է տեսրում գրածը տանը կարդալու միջոցով ընթանելու վրա։ Սա ճիշտ ճանապարհ չե։ Գիրքը պետք ե ըմբռնել կարգալու ժամանակ, դասախոսությունը դասախոսության ընթացքում և վոչ թե գրանց կոնսպեկտուների միջոցով։ Զգետք ե մոռանալ, վոր ուսանողի կոնսպեկտն ուսումնական նյութը հիշողության մեջ վերարտադրելու, ըմբռնածը հետագայում ևս թարմ ու լրիվ պահելու միջոց ե և վոչ թե ուսումնական առարկան սովորելու բուն ու միակ միջոցը։

Կոնսպեկտը կազմելու տեխնիկան գա նյութը տեղնուտեղը ըմբռնելու հիման վրա, վերնագրերի, առանձին բառերի, բնորոշությունների պահպանագործությունների գրի առնելն ե, առանձին պայմանական նշանների (որինակ՝ →, ?, !, x, ≡, —, ||, +) համապատասխան գործածությունը։ Լավ ե կոնսպեկտի միջի ամեն մի նոր միտք գրել նոր տողից, վորով ընդգծվում ե նրա

ինքնուրույն և վոչ թե յերկրորդական կամ բացատրական նշանակությունը:

Պլան և կոնսպեկտ կազմելու հիմնական սկզբունքներն ավելի հստակ դարձնելու և տեխնիկան ցույց տալու համար ստորև բերում եմ կոնսպեկտավորման մի քանի նմուշներ:

Ա.) Ինչպես կազմել, որինակ՝ Ա. Պուշկինի «Կապիտանի աղջիկը» գրվածքի պլանն ու կոնսպեկտը:

Անհրաժեշտ է, 1) ամբողջ գիրքը կարդալ ուշադրությամբ և սկզբում, կարդալու ժամանակ միայն նշումներ անել գրքի լուսանցքում. 2) գրքի ընթերցումը վերջացնելուց հետո, յերբ արդեն գիրքն իր վողջ բովանդակությամբ բացված ե ընթերցողի առաջ, կազմել գրքի կոնսպեկտը գիրքը բնորոշող հարցադրումների ձևով, վորոնց մեջ պետք ե նշվեն:

ա) Դարաշրջանի կապակցությամբ գրվածքում ծավալվող դեպքերն ու վիպական ինտրիկները:

բ) Գլխավոր դրական տիպերն ու նրանց բնութագրումը (Պեյոտը Գրինյովը, կապիտան Միրոնովը, Նատաշան, Սափիլչը—վերջինիս յուրահատկություններն իրուն ճորտ գյուղացու):

գ) Գլխավոր բացատրական տիպերի բնութագրումը (Ծվար-րինը, Անդրյուշան, Զուրբինը):

դ) Պուշկինի աներկրայ համակրանքը գեղի Պուգաչովը և այդ համակրանքի ու մեծարանքի պրիյումները ցարական ցին-գուրայի պայմաններում:

է) Հեղինակի գեղարվեստական պրիյումները մարդկանց ու դեպքերը նկարագրելու գործում:

զ) Հայրենասիրության, պարտքի և պարտաճանաչության, սիրո, նրա մաքրության ու նվիրվածության, անձնազոհության և այլն գաղափարների արձարծումն ու մեկնարանումը Պուշկինի մոտ՝ ըստ «Կապիտանի աղջիկ» գրվածքի:

Ինչպես ընթերցողը տեսնում է նման ձևով կոնսպեկտ կազմել հնարավոր և միայն վերլուծական աշխատանք կատարելուց հետո, ամեն մի գրտկան յերկ պետք ե նախ և առաջ վերլուծել իր ամբողջությամբ: Անշուշտ այլ յեղանակներով ու հարցադրումների կարգով ևս հնարավոր ե կոնսպեկտավորել Պուշկինի «Կապիտանի աղջիկը», այս որինակը այդ յեղանակներից մեկն է միայն:

Բ) Վերցնենք մի այլ որինակ, վորտեղ շարադրական կողմն տվելի ուժեղ և քան վերլուծականը և կոնսպեկտ պետք ե կազմել գիրքն ընթերցելուն համընթաց և գրքի նյութերի հաջորդականությամբ:

Պետք է կոնսպեկտավորել Պրոֆ. Կրուբերի «Ընդհանուր յերկրագիտություն» գիրքը (Յերևան, Պետհրատ 1937թ.):

Դրբի 4-րդ հատվածը «Յերկրի գեոլոգիական պատմությունն» և, բաժանված յերկու գլուխների 1) գեոլոգիական ժամանակագրություն և 2) յերկրի մակերեսույթի հիմնական որինաչփությունները և զարգացման ետապները:

Յերկրի ժամանակագրությունը.

| Երաներ | Պերիոդներ | Տևողությունը |
|--|-----------------|--------------|
| Կայնարդույան—Զորբորդական, Նեոգեն, Պալեոգեն | 60,800,000 տարի | 100,000,000 |
| Մեզոզույան—Կավճային, Յուրա, Տրիաս | 170,000,000 | » |
| Գուլեռդրյան—Պերմ, Կարբոն, Դիվոն, Սիլուր, | 560,000,000 | » |
| Կեմբրի | | |

Եոզոյան
Արխեյան

| | | |
|---|-------------|---|
| Երաներ→շերտերի խմբեր→պերիոդներ→սիստեմներ→եպուխաներ→դարեր: | 700,000,000 | » |
|---|-------------|---|

Բացարձակ խրոնոլոգիա չկա: Մոտավոր թվեր:
Մեթոդները՝ ուսղիում, թորում և ուրան պարունակող ուսղիուակտիվ միներալների տարանկման ուսումնասիրությունն Ամեն մի պերիոդունի իրեն հատուկ բռնական և կենդանական աշխարհ. մնացորդների հայտնաբերում և ուսումնասիրություն:

Յերկրի կեղեվի ստրոկտուրայի հաջորդական փոփոխությունները

Տրանսգեոսիաներ, ոեզրեսիաներ, շարժուն շրջաններ—պեսսինկերներ:

Թիշ շարժուն շրջաններ, կոնտինենտալ մասսիվներ՝ վահանաներ կամ պլատֆորմներ:

Հատկանիշները, ոռաջինը՝ յերկարատև պրոցեսներ, ծանծաղ, միջին խորության և խործովյա ծաղում: Գեոսինկլինարի հատակի մշտական ձկում:

Ծալքավորման պրոցեսը — որոգենեղ և այլն:

Այս նմուշի մեջ պլանը տրված է յենթավերնագրերի ձեռով իսկ բացարձությունները կհանդիսանալու միջամատ միջոցով:

Դ.) Վերցնենք կոնսպեկտ կազմելու մի այլ որինակ. Վ. Նատալիի «Գենետիկա» դասագիրքը (Յերևան, Գետհրատ 1935թ.).

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Առարկան. —

Գենետիկան կենաբանական գիտություն ե, վորն ուսումնասիրում և ժառանգականությունն ու փոփոխականությունը և նրանց բինաչափությունները:

Գենետիկան վորապես գիտություն իր սկզբն ե առել 19-րդ դարի կեսերում և զարգացել ե 20-րդ դարում:

Մենզելի փորձե բիխոշոր նշանակությունը — գենետիկայի պատմության փաստական սկզբը:

Գենետիկա
պրոբլեմների
հետ կապված
ուղղությունները.

1) Ժառանգականության պրոբլեմները լուծելու փորձեր և վերացական տեսություններ; 2) Նույն հաբում բիոմետրիայի մեթոդներ կիրառելու փորձերը; 3) Պըրոբլեմի եքապերիմենտալ մշակում; 4) Ժառանգականության պրոբլեմը ցիտոլոգիայի տեսակետից:

Մեթոդները. — Եքսպերիմենտի վճառական նշանակությունը գենետիկայի համար,

և այլն և այլն ու այսպես շարունակաբար:

Դ.) Նկատի ունենալով վոր այս գրքույկն ընթերցելիս կարող են վերոհիշյալ գրքերն ընթերցողի ձեռքի տակ ընդունել բնում եմ. կոնսպեկտավորման մի նմուշ ևս հենց այս գրքույկից, կարելի յետ տալ հենց այս աշխատության Յ-րդ գլխի կոնսպեկտը կազմելու մի նմուշ:

Յ-րդ գլ.

Աղբյուրներ
ձեռք բերելը.

Ունենալ մշտի կլասիկների յերկերը, նույնը հիմն, դասագրքերի մասին:

Տեղի հնարքավորությունների ողտագործումը → համապատասխան տեղերից գերք ձարեց մշակելը վերադարձնել:

Ծրագիրը՝ յելակետ.

Ծր. + դասադիրք + խոր մշտկում = յուրացում: Առաջնական ակտը կայուն մտադրություն:

Հնի կապակցումը նորի հետ: Պահապահել աշխատանքը: Հիշելու կայուն մտադրություն: Անհետաքրքիրը → հետաքրքիր գժվարից հեշտ, հեշտից՝ գժվար (վճը): Յեկ այլն:

Յեկ այլն և այլն:

Այսպիսով բերեցինք կոնսպեկտավորման հինգ որինակ, մորգնցից առաջինը՝ լենինի ճառը կոմյերիտմիության Յ-րդ համագումարում (աես գրքույթիս եջ՝ 27), ցույց տալով նրա մշտական յեղանակը մանկավարժության ծրագրի կապակցությամբ, յերկրորդը՝ հնապիտանի աղջիկը, յերրորդը՝ չորրորդը կայուն դասագրքերի և հինգերորդը՝ այս գրքույթի Յ-րդ գլխի, վորոնք ցույց են տալիս կոնսպեկտավորման տարրերը յեղանակներն ու տեխնիկան:

Ի հարկե պետք եւ ձգտել վորքան կարելի յե քիչ ժամանակ ծախսել գրանցման վրա: Մըս համար պետք եւ լեզվի, տվյալ ուսումնական առարկայի առանձնահատկությունների հաշվառումով կրծատ գրելուածախ կրկնվող բառերը, որինակ՝ ժամանակ՝ ժմանկ, զանովան—զնզն, դպրոց—դպր, կոմունիստական դաստիարակություն—կ/զ, սոցիալիստական մըցում—ս/մ, դիալէկտիկական մատերիալիզմ—զ/մ, կամ—կմ, համար—հմբ, և այլն և այլն: Կըրծատումների տեսակներն ամեն մի ուսանող ինքն և վորոշում: Սակայն նա պիտի իմանա լիզվի կանոնները, որինակ՝ բառը կրծատելիս չպետք եւ ձայնավորով վերջացնել այն և այլն Ինչ խոռը, վոր կոնսպեկտը գրվոծ պիտի լինի այնպես, վոր կարգալիս նախադասությունները հեշտությամբ ճիշտ ձևակերպումն ստանան:

Կոնսպեկտում պետք եւ աչքի զարնեն ամենակարենը մոմենտները, և յերկրորդականը տարրերվի առաջնակարգից: Այլ կերպ ասած՝ կոնսպեկտի ներսում պետք եւ լինի ավել-

1) սեղմ կոնսոլ եկատ: Արա համար պետք եւ համապատասխան պայմանական նշաններ գործոծել (տես նախորդ եջը), վորոնք ավելի հեշտացնում են մեր աչքի աշխատանքը, անտեսում են ժամանակը: Շատ լավ է, յերբ մի խնդրի վերաբերյալ մտքերն իրենց հաջորդականությամբ համարակալվում են I, II, III, 1), 2), 3), ա, բ, գ, և այլն):

Անա սրանք են կոնսոլեկտ կազմելուն վերաբերող հիմնական կանոնները, վորոնց կիրառումը շատ ու շատ կհեշտացնի ուսանողի ուսումնական ինքնուրույն աշխատանքը և առաբեշների յուրացումը:

Ամեն մի հեռակայող ուսանող հեռակա ուսման միջոցով մանկավարժական կրթություն ստանալու կայուն վճիռ կայացնելուց հետո պետք եւ այդ կրթությունն ստանալու ժամանակամիջոցում կազմակերպի իր աշխատանքի պայմանները, պլանավորի իր ժամանակն ու աշխատանքը, դաստիարակի իր կամքը, բնավորությունը, վերացնի թափթփածության հետքերը և գրքի, դաստիուության նյութերը խորը յուրացնելու համար ձեռք բերի մըտավոր աշխատանքի անհրաժեշտ ուսմակություններ ու հմտություններ, մշակի ինքնուրույն աշխատանքի վորոշ վորոշ վոճակի, վորը հետազայում ևս, ուսումը վերջացնելուց հետո, հընարավորություն կտա նրան ուացիոնալ կազմակերպել իր (ուսուցչի) ինքնազարգացումն ու ինքնակրթությունը և կանգնելու «աշխատիք բարձրության վրա, վորի վրա նա յերբեք կանգնած չի յեղել, կանգնած չի և չի կարող կանգնել բուրժուական հասարակության մեջ»*):

ՈԳՏԱԳՈՐԾՄԸ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

1. П. А. Попов.—Организация и техника научно исследовательской работы 1933 г.
2. Проф. Г. М. Уиппл.—Как нужно заниматься. Сокращенный перевод. «Советское студенчество» 1937 г.
3. Нейман.—Как самому учиться 1931 г.

*.) Լենին. Ընտիր յերկիր, հատոր 5-րդ, եջ 488, Կուօնքատ 1935թ.:

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.




FL0014048

451

ԳԻՆՅ 80-Կ. 84.

տասկ



11989

8666

М. Пирумян

ОРГАНИЗАЦИЯ САМОСТОЯТЕЛЬНОЙ
РАБОТЫ ЗАЧНИКА

Институт повышения квалификации учителей
Арм. ССР, Ереван, 1988